

ՀԱԻԱՏԱՎ, ՍԻՐԵՎ ԹԷ ԿԱՍԿԱԾԻԼ

1. ՀԱԻԱՏԱՎ ԹԷ ԿԱՍԿԱԾԻԼ
2. ՀԱԻԱՏԱԼ և ՏԱՌԱՊԻԼ
3. ՄԷՐ և ՎԻՇՏ, ՀԱԻԱՏՔ և ՓՈՐՉՈՒԹԻՒՆ
4. “ԻՆՉ ՈՐ ԿԸ ԼՄԷՔ ՈՒ ԿԸ ՏԵՄՆԷՔ”

TO BELIEVE, TO LOVE, OR TO DOUBT?

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
ԹՈՒԱԿԱՆ

ԱՂՕԹՔ ԱՌ ԱՆԺԱՄԱՆՅԵԼԻՆ ՈՐՊԷՍ ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ով Հայր Երկնաւոր Զու սրբափայլ Ներկայութեան սրբութիւնն ու պատկառանքը կ'ակնածեն գիս՝ մեղաւորս և հողաշէնս մօտենալու Զու անսպառ սրբալոյս ողորմութեանդ ու գթութեանդ: Ով անսկիզբ և համայնապատում Լոյս, անպարունակելի Ողորմութիւն, որ չգոհացար տիեզերքի գոյացութեամբ ու աշխարհի շնչաւոր ստեղծագործութեամբ ու շարունակեցիր Զու բարիկամեցողութեամբ ստեղծել նաեւ Զեզի՛ պատկերակից մարդը:

Մարդ արարածը, որ սողուններու ու կենդանիներու ոտքի կոխան հողն ու աղտեղութիւնն էր, անբան ու անզգայ կաւը, բարձրացուցիր զայն հրեշտակներէն աւելի ու շնորհեցիր ու քանդակեցիր անոր իսկութեան, էութեան և ինքնութեան մէջ Զու անճառելի կերպարդ: Տէ՛ր, որքան ալ գոհանամ ու շնորհակալութիւն յայտնեմ ո՛վ անպատմելի Զաղցրութիւն, նորէն կը տեսնեմ կաւակերտ ջինուածփիս բոլոր տկարութիւնները, կը "ծաղկիմ սակայն չեմ պտղաբերիր, որովհետեւ կիրքերս ուժգին են, փառքս անժուժկալ և բնութիւնս կաւեղէն": Մի միայն անթարգմանելի Ծնունդ Միածնիդ Ոսկերուն փարած, նման ապաշխարող Մագդաղէնացիին, կը համարձակիմ բարբառիլ ո՛վ Տիեզերական Սէր ու տեւական յոյսի շօշափելի Յայտնութիւն:

Ո՛վ ոչինչէն ստեղծող Աստուած, անհանգրուան, անսկիզբ ու անվախճան: Ո՛վ արդարատենչ Կամք, աւելի խորապէս կարելի է երեւակայել Զեզ, քան բացատրել, և ալ աւելի իրապէս գոյ ես անմատչելիօրէն հեռաւորութեամբդ, քան թէ կրնանք երեւակայել Զեզ:

Երեւումիդ Լոյսին ճառագայթը կ'իմացնէ մեզ Գալուստը այն մեծ ու ահեղ Օրուան, հրաշքներու համատարած գօրութեան երբ ստեղծագործութեանդ հոյակապ իրականութիւնը պիտի հասնի իր լրումին ու յայտնուի Զու Երկնային Թագաւորութիւնդ և իշխանութիւնդ երկրի վրայ:

Մարդեղութեան փրկարար Զօրութիւն՝ Հօրդ Անբաժանելի Ծնունդ Յիսուս, Յոյսն ու Փրկութիւնն ես այս աշխարհին: Մինչեւ ե՞րբ պիտի շարունակէ մարդ տագնապահար ու ցաւատանչ իր հեւքը մեղքի խաւարակուր

աշխարհին մէջ: Մինչեւ ե՛րբ ո՛վ անճարելի Զողցրութիւն և Յոյսը անհամար նահատակներուն: Անթիւ ննջեցեալներու և անհաջուելի հաւատաւորներու բարձրագոյ աղաղակները կը բարբառին ըսելով.

*«Եկեացէ արքայութիւն Բո. եղիցին կամք Բո
որպէս յերկինս և յերկիր».*

Ո՛վ Անտիսակալ և Բարեգութ որ դադար չես ճանչնար: Անբուն Պահապան և մշտաջող ու մշտարթուն Ուղեկից, եկու՛ր Բու թագաւորութեամբդ ու հրեղէն հրեջտակներու փողով ազատագրելու Բու ժառանգութիւնդ՝ Բո՛ւ Եկեղեցիդ: Ամէն:

Ա. Նորատունկեան

Յունվար 1, 1992

ՀԱՒԱՏԱՊԼ ԹԷ ԿԱՍԿԱԾԻԼ

Վերլուծութեան և «բանականութեան» օրէնքներու չենթարկուող մեծագոյն երեւոյթներէն մէկը *հաւատա՛լն* է, հաւատալ Աստուծոյ գոյութեան և Անոր Հայրութեան: Ապրելու համար պէտք է հաւատալ կեանքի էութեան և անոր նպատակին: Քրիստոնեայի մը դերը՝ հաւատալ, տառապիլ և սպասել է: Հաւատալ ու սիրել այն զոյգ ճառագայթարձակ ջողերն են, որոնք կը սրբացնեն մարդը և տեսանելի կը դարձնեն Անտեսանելին: Հաւատալ, խորհուրդի մը տիրացումն է որուն ստուգութեան փորձանիշը ի՛նքն իր մէջն է: Ստուգութեան անդիմադրելի զգացումն է որ խանդավառ կը դարձնէ Բրիստոնեան: Կը հաւատանք թէ յետ մահու մեր երկրաւոր անձնականութիւնը նոյն որոշ դրոշմով, Յարութենէն յետոյ պիտի գոյատեւէ:

«Եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը պիտի տեսնես»:

--Յով. ԺԱ.40:

«Հաւատալ» կը նշանակէ՝ հաւանիլ, կամենալ, վստահիլ և ընդունիլ Աստուծոյ իշխանութիւնը: Վստահիլ Աստուծոյ խնամակալութեան-- **Մատթ. 9.25-34, Ղուկ. ԺԲ.22-31:** Հաւատքը կը բանայ անսահման կարելիութիւններ մարդու համար: Աստուծոյ չհաւատացող հոգին կրնայ ըսուիլ թէ գոյութիւն իսկ չէ առած դեռ: Ան կը նմանի ներարգանդեան վիճակի մէջ գտնուող մանկիկի մը, ինչպէս որ չծնած մանկիկը արգանդին մէջ անհասկնալի, ջփոթ ու խաւար գոյութիւն մ'ունի և ինքնութիւն չէ ստացած, այնպէս է նաեւ անհաւատ հոգին: Այնպէս որ երբ հոգի մը անհաւատ մեռնի, կրնայ ըսուիլ թէ վիժեցաւ, այսինքն չծնած մեռաւ:

Հաւատալ՝ կը նշանակէ նոյնանալ թէ՛ հաւատացածին և թէ՛ բոլոր հաւատացեալներուն հետ. որոնք կը հաւատան Բու հաւատացածիդ՝ Աստուծոյ: Եթէ կը հաւատանք Աստուծոյ, պարտական ենք սիրել ու վստահիլ նաեւ բոլոր անո՛նց որոնք կը հաւատան: Կարելի է անհատապէս և ազատօրէն հաւատալ, սակայն այս հաւատալը անկախօրէն չգործադրուիր: Հաւատալու ազատ իրագործումը, որ կը կարծուի բոպէական ըլլալ, իրականութեան մէջ պատմական է ու դարաւոր անցեալէն կու գայ:

*Հաւատալը՝ հաւատն է Անհաւատալիին,
ջերմօրէն ու խանդավառօրէն:*

Զհաւատալը մարդու մը բացարձակ իրաւունքն է: Յովհաննու Աւետարանին մէջ առաքեալը կը ջեջտէ "հաւատալ"ը աւելի Բան "հաւատք"ը: Որովհետեւ հաւատքը կրնայ միայն *"գլխաւթիւն"* մը ըլլալ իսկ *"հաւատալը"*

գործօն արարաբ: Առաքեալներու վկայութիւնը հաւատալի՛ դարձաւ, որովհետեւ *իրե՛նժ* կը հաւատային:

***Հաւատալիքը ճշմարտութիւններու ցանկ մը չէ՛,
այլ Քրիստո՛ս է:***

Հաւատալոյս հոգին երբե՛ք պիտի չընտրու նի պարտութիւնը:

Հաւատալու համար միայն միտք չի բաւեր, այլ յայտնատեսութիւնն ալ հարկաւոր է: Քրիստոնեայ ենք առանց Քրիստոսի հաւատալու: Եկեղեցական ծէսերը կ'ընենք առանց այդ խորհուրդները ապրելու: Ժամ կ'երթանք առանց երեսնիս խաչակնքելու: Հաւատալու առաջին նշանը ***աղօթե՛լ է:***

Անշուշտ թէ հաւատքի կարիքը կայ թէ Աստուած կայ. նոյնպէս ալ պարտաւոր ենք *հաւատալու*, թէ Ան ***անգոյ*** է:

Հաւատալու կարողութիւնը չգործածող մարդիկ ո՛չ թէ անհաւատ են, այլ բթացած հաւատքներ, խանգարուած հաւատքներ, ժխտական հաւատքներ և այլատերած հաւատքներ շակողներ ու կրողներն են: Հաւատալու փորձառութիւնը ոչ միայն հակասող չէ բանականութեան, այլ կը գլէ կ'անցնի գերադասելով զայն: Հաւատալու զօրոյթը, ո՛չ թէ *հաւատքի* մէջն է, այլ չհաւատալո՛ւ ազատութիւնը ունենալով հանդերձ, *հաւատալո՛ւն* մէջն է:

***Հաւատակերտ II. Էջմիածինը ուր հոգիները
սրբութեան երազը կը վերլուծեն:***

Հաւատամքով քանաձեւուած հաւատքը հայ ժողովուրդին համար կեա՛նք եղած է աւելի քան սրամախոհական մտածողութիւն:

Նիւթապաշտ ու աստուածամերժ քանգէտներու համար սուտը ճշմարտութիւն կը համարուի, անարգանքը՝ տաղանդ, կեղծիքը՝ հաւատարմութիւն, քծիւնքը՝ հայրենասիրութիւն, ստրկամտութիւնը՝ գաղափարի զինուորագրութիւն: Իսկ Հայաստան աշխարհի ազգը մահուան մանգաղին տակ (վեց հարիւր տարի ստրկութեան մէջ) հաւատարիմ մնաց իր էութեան, աւանդներուն, խղճին և հաւատքի սրբութիւններուն: Այսօր, վեց հարիւր տարի յետոյ Ս. Էջմիածնի Խաչի դօղանջը կը զանգահարուի աշխարհի բոլոր ցամաքամասերուն մէջ: Աստուած կը լսէ մեր բերթուածները: Ան կը փնտռէ միայն խոնարհ և հաւատարիմ հոգիները:

Մարդեղեալ Յիսուս, որպէս հաւատարիմ Հրեայ, պաշտպան կանգնեցաւ Իր հաւատքին: Իր հմայագեղ առակները պատկերացումներն են իր հայրենի հողին և բնութեան համակրութեան: Ան դիտեց և ուշադրութիւն դարձուց աղբատն ու հարուստը, Հրեան ու հեթանոսը որոնք Բալեցին Հրեաստանի ճամբաները:

Հանճարիմաց և գիտուն մտքին, հաւատաւոր և անխոնջ հոգւոյն,

բարի և ստուգապէս ազգասէր սրտին շնորհիւ է, որ Հայութիւնը ունեցաւ իրեն սեպհական Հայ տառերը:

Առաջինը **Ա** և վերջինը **Ք** ա՛յնքան հարազատօրէն հայկական են, որ Յայտնութեան թարգմանիչը, երբ հասաւ այն տողին, ուր ըսուած էր իր առջեւի բնագրին մէջ. Ալֆա և Օմեկա, փետուրը իր մատներուն տակ խայտանօրով սահեցաւ ողորկ մագաղաթին վրայ, մինչ իր ջրթներէն դուրս կու գար երգի պէս հնչական շունչը ըսելով

«Ես եմ Այբը և Քէ»ն:

“Ա”-կը նշնակաէ Աստուած, իսկ **“Ք”**-ն՝ Զրիստոս. . .

Ֆապրիֆի մը մէջ, երիտասարդ մը իր ընկերին կ’ըսէ. «Բացայայտ է որ դուն հաւատացեալ մըն ես»: Ընկերը կը հարցնէ. «Բայց ինչէ՞ն իմացար»: Առաջին ընկերը կը պատասխանէ. «Կեանքէդ յայտնի է դուն մեզի պէս չես ապրիր»: Յիսուսի աջակերտող մը կը տառապի որպէս անձնագոհ, անվեհեր և տիպար հաւատացեալ մը սուրբ գաղափարին՝ Զրիստոսի գոհաբերական արիւնոտ ճանապարհին վրայ: Հաւատացեալ մը կարիքը ունի հոգեկան հասունութեան: Յիսուս ըսաւ. *«Կատարեալ եղէ՛ք ինչպէս ձեզ երկնաւոր Հայրը կատարեալ է»*: Եկեղեցին այդ լինելիութեան դայեակը, ստնտուն ըլլալու է: Աղօթքը գէնֆն է անգէն հաւատացեալին:

Հաւատացեալ մը որ ծնունդով Բրիստոնեայ է, սակայն անհաղորդ՝ իր կրօնական ժառանգութեանց և պատմութեան, չի կրնար ունենալ Բրիստոնէական ոգի: Ան կարիքը ունի իմաստաւորուելու: Աստուծոյ վսեմ ներկայութիւնն ու անգերազանցելի Սրբութիւնը կ’արտացոլայ Յիսուս Զրիստոսէ ու կ’ակնկալուի իւրաքանչիւր հաւատացեալէ, որ Զայն օրինակէ:

Հաւատացեալը կը մտնէ Զրիստոսի ամենամտերիմ և էական հաղորդակցութեան մէջ և հոն կը մնայ, կ’ամրանայ կը վայելէ հոգեկան շնորհներ: Խորհուրդով Զրիստոնեան կ’ապրի երջանկութիւնը Աստուծոյ ներկայութեան: Հաւատացեալը կը քալէ յառաջ, այսօր՝ ցաւը սրտին, վաղը՝ կեանքի ջահն ու Բնարը ձեռքին:

Հաւատացեալը ջարուտակ վերադառնալու է Աւետարաններուն և ջանալու է թափանցել Յիսուսի կեանքին և սուրբ ապրումին: Ան դիմագրաւելու է իր դժուարութիւնները ա՛յն լոյսով, որ Աստուած յայտնած է Յիսուսի կեանքին մէջ:

***«Հաւատացեալը պանդուխտ մըն է անհայրենիք
այս աշխարհի վրայ»:***

Հաւատացեալը իր անցեալովը (հաւատօրով) լեցուած, դէպի որոշադրեալ ապագայ մը կը քալէ: Աստուծոյ զգացումով ամրացած ան սեւ

ուժերու գրոհին դիմաց կը մնայ անխոցելի անասան ու միջոտ յաղթական: Մահէն յետոյ հաւատացեալին մասունքները հողին հետ ջաղախուած և ընդելուզուած են, բայց չեն հողացած, փոշի չեն դարձած, ան յարութի՛ւն պիտի առնէ: Մահուան վախը հաւատացեալի հոգիէն մշուշի նման կը փարատի:

Պօղոս առաքեալ "եկեղեցի" ըսելով "սուրբերու" հաւաք ըսել կ'ուզէ՝ նոր հաւատացեալներու միաբանութիւն: Պօղոս, 25 անգամ "սուրբեր" կը կոչէ եկեղեցւոյ հաւատացեալները: Այսօր կարգ մը հոգեւոր հաւատացեալներ "անուն" և "բառ" կը փնտռեն դիմացինը Բրիստոնեայ ճանչնալու համար: Իրենց համար *«ես վերստին ծնած Բրիստոնեայ եմ»* բառերը ենթական Բրիստոնեայ կը դարձնէի նախապաշարոււմը ունին: Հաւատացեալներ Բրիստոսի Մարմինը կազմելո՛ւմ, Բրիստոսի պատկանած կը սեպուին-- **Ա. Կորնթ. ԺԲ.27:**

Յիսուսի աշակերտող մը դառնալու է մարդկութեան փարոսը հոգիի ծառան, գիտութեան սպասարկուն, իմացականութեան և հանճարի՝ փիլիսոփան, բանաստեղծը, գիտնական հերոսը և սուրբը: Ա՛ն առինքնուած Գերագոյն Ուժէն, պէտք է փորձէ հակազդել չար և մութ ուժերու ձգողութեան: Ան նայելո՛ւ է Ս. Խաչին կատարը ու տեսնէ Խաչեցեալ Փրկիչը:

Հաւատացեալը երբ վերջապէս հասնի լոյսի Աղբիւրին՝ Յիսուսի, անզգոյշ թիթեռնիկներու պէս չի՛ մոխրանար Անոր բոցին մէջ, այլ կը ստանայ յախտենական կեա՛նք: Հաւատացեալները կը դիմակալեն անյաղթահարելի դժուարութիւններ, կը յաղթահարեն հազարաւոր խոչընդոտներ, կը ծաղրուին, կը վտարուին, կը սպաննուին, սակայն կը շարունակեն հաւատարիմ մնալ իրենց Տիրոջ Յիսուս Բրիստոսի:

Հաւատացեալին ջանքն ու ձգտումը սրբութիւն, հոգիի մաքրութիւն և Աստուծոյ հետ հաղորդութիւն ըլլալ է--**Ա. Թես. Ե.23:**

Հաւատացեալներու չարչարանքները և սպաննութիւնները մարդկային կատարումներ չեն, այլ Աստուծոյ գօրութիւնն ու անկապտելի հեղինակութիւններն են: «Հոգիին հաւատացողը, հոգիով ապրող, հոգեկան արժէքներ ստեղծող և զանոնք յարգել գիտցող ազգը գերեզման չունի...»

--**Գարեգին Ա կաթողիկոս:**

Գաւառութիւնը կը պատկանի հաւատքին և Աստուածալայտութեան, իսկ *վարդապետութիւնը* կը պատկանի ուսման և եկեղեցական փիլիսոփայութեան:

«ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»Ը յաւերժական լուսաւոր փարոս մըն է գրուած Ս. Ներսէս Ծնորհալիին կողմէ, որ ճանչցուած է որպէս լուսոյ, յոյսի և սիրոյ երգիչը: 1882-ին 36 լեզուով հրատարակուած է Ս. Ներսէս Ծնորհալիի «Հաւատով Խոստովանիմ»ը Ս. Ղազարի տպարանէն, Վենետիկ:

Ի՞նչ է հաւատքը:

«Հաւատքը յուսացումն բաներու և հաստատումը և ապացոյցը այն բաներու և որոնք չեն երեւիր. որովհետեւ նախնիքները անով վկայութիւն ընդունեցան»--Եբր. ԺԱ.1:

Ազգութենէ, լեզուէ և ցեղային պատկանելիութենէ գերիվեր և հասարակային է աներկեւան հաւատք, որ յայտնուեցաւ Մարդեղեալ Զրիստոսով: Կանոնն ու օրինական կապերը ապարդիւն են հոն, ուր հաւատքն է որ պէտք է խօսի, գործօ՛ն հաւատքը, ո՛չ սրտաջարժ ձեւերը, ո՛չ ջրթներու վրայ թրթռացող բանաձեւերը նման հեթանոսներու, և ո՛չ ալ Արեւելեան միաստիք արտայայտութիւնները, այլ խոր և **ապրուած** հաւատքը:

Հաւատալը զօրութեան մը ներշնչումն է: Գաղաբարական մը տարածելու, հաւա՛տք արծարծելու, կրօ՛նքը ծանօթացնելու և եկեղեցւոյ կանթերը վառ պահելու համար: Հաւատքը պարտի դարունալ որակական և ոգեկան ներկայութիւն: Հաւատքը ստուգանիջն է յարատեւութեան և արդիւնաւորութեան: Մեքենական աշխարհահայեացք ունեցողներու համար, հաւատքը գառանցանք է, իսկ հաւատաւորի համար՝ կեանք է, զօրութիւն և փրկութիւն: Անկենդան հողէն ու ջուրէն, և կարծր միջավայրէն, կը հաղորդուինք կենդանի զօրութեամբ մը, որ թէեւ չի տարրալուծուիր գիտականօրէն, բայց *կ'ապրուի իմանալի զօրութեամբ*: Մշտավառ պահենք մեր հաւատքը, որուն առջեւ գիտութիւնը կը խոնարհի և փիլիսոփայութիւնը կը լռէ: Եկեղեցական Վարդապետութիւնները հաւատքին տեղը չեն կրնար գրաւել:

Զրիստոնէութեան մէջ էականը միջոտ *սիրելի* և *հաւատալն* է, ո՛չ *եկեղեցական վարդապետութիւնը*: Հաւատքը ներգործող իրականութիւնը և իրողութիւնն է: Հաւատքը առանցքային դեր կը խաղայ գոյութեան իմաստը հանդիսացող ազատագրական պայքարին մէջ, թէ՛ կրօնական, թէ՛ քաղաքական և թէ՛ առեւտրական:

Հաւատք կամ հաւատալ բառերը տասն անգամ աւելի գործածուած են Նոր Կտակարանին մէջ քան Հինին, որ երեք անգամ աւելի մեծ գիրք մըն է քան Նոր Կտակարանը: Ինչպէս կայ *մեռեալ հաւատք*՝ կայ նաեւ *մեռեալ սէր*: Հաւատքը հոգիի անծանօթ ալիքներէն կու գայ, որուն մարդիկ ներշնչում կ'անուանեն: Կարգ մը անձեր, Յիսուսի գերեզմանին մէջ թաղած էին իրենց հաւատքն ու յոյսը: Հաւատքը կ'ըմբռնուի և կը հասկցուի մի միայն աստուածային հաղորդումով և շնորհումով:

**Հաւատքը կը վերաբերի կեանքի ամբողջութեանը:
Ուրկէ՞ ենք և դէպի ո՞ւր կ'ընթանանք:**

Հաւատքը տկարութիւն չի ճանչնար: Հաւատքը արտայայտելու կերպը և զայն բացատրելու եղանակը կը տարբերի իւրաքանչիւր յարանուանութեան մէջ: Այս տեսակ տարբերութիւնները միութիւնը աւելի տիեզերական կը

դարձնեն: Հաւատք առ Աստուած, տրամաբանական ըլլալու է, սակայն որեւէ տրամաբանական սահմանում անբաւարար է հաւատքին դերը կատարելու: Տրամաբանութիւնը իր բանաւոր սահմանումը ունի, իսկ հաւատքը սահմանափակում չունի:

Այն մարդը, որ տիեզերական հրաշալոյս գեղեցկութիւններուն մէջ չի տեսներ Արարիչը, անոր մէջ կը պակսի ոչ թէ հաւատքը, այլ դասողութիւնը:

Յիսուսէ ճառագայթած և միջոտ ճառագայթող հաւատքը մտային և հոգեկան անդորրութիւն պարգեւող անհրաժեշտութիւն մըն է: Երբ պակսի հիմնական հաւատքը, ենթական կը տուայտի անորոշութեան մէջ: Անխախտ հաւատք, ոչ կոյր, մեծ յաջողութիւններու ու իրագործութիւններու գաղտնիքը եղած է դարերէ ի վեր: Հաւատքը պատմական փորձառութիւն մը չէ, այլ հանապազօրեայ ապրում մըն է որ կը կարօտի սերտողութեան ու հոգեկան վերանորոգման:

Հաւատալ կը նշանակէ նոյնանալ թէ հաւատացածին և թէ բոլոր հաւատացեալներուն հետ. որոնք կը հաւատան բու հաւատացածիդ՝ Աստուծոյ: Եթէ կը հաւատանք Աստուծոյ, պարտական ենք սիրել ու վստահիլ նաեւ անոնց, որոնք կը հաւատան: Հաւատքը այնքան հին է որքան մարդկութիւնը, սակայն նոյնքան առօրեայ հետաքրքրութեան արժանի՝ որքան արհեստագիտութեան դարի Stress-ն ու յօգնութիւնը:

Հոգեբաններ և բժիշկներ կը վստահեցնեն, թէ *հաւատքը* կը հանդարտեցնէ մարդկային ջղային համակարգը, կը պայծառացնէ միտքը, կը չէզոքացնէ *սթրեսը* և կ'աջիտւածացնէ օրկանները: Ամենէն կարեւոր արժանիքները ո՛չ տաղանդը, ոչ ալ բաջութիւնն են, այլ լրջութիւնը և հաւատքը: Հաւատքին առանցքը կը կազմէ ենթակային վստահութիւնը մեռելներու յարթական Յարութեան: Առաքելական բարոզչութեամբ, Ս. Գրիգոր Լուսաւորիչով հոչակուած, Սահակ Մեսրոպով հայացած, Բաջն Վարդանով արիւնացած Քրիստոնէական հաւատքը:

Գողգոթան՝ վիշտին սրբութիւնը և հաւատքին զօրութիւնը խորհրդաւորողը եղած է: Դիմեցե՛ք դէպի կեանք, դէպի աջխատանք, դէպի լոյս առաւօտ հաւատքով և լաւատեսութեամբ: Եկեղեցին կ'անգնած է, որ մոռացութենէ փրկէ հաւատքի արժէքները, սէր, անձնուրացութիւն և զոհաբերութիւն: Երեւ հոգեւոր հիմքերը որոնք գոյատեւութիւն տուին Հայութեան՝

1. Քրիստոնէական հաւատք մեռելոց յարութեան
2. ազգային գիր և գրականութիւն և
3. մշակոյթի պաշտպանութիւն:

Վարդ մը հեթանոսներ, աւելի բրիստոնեայ էին, քան ներկայ հաւատացեալները: Համայնավարութիւնը իր պողպատէ սպառազինութեամբ չկրցաւ նուաճել անգէն Հայաստանեայց հաւատքի լուսպայծառ և կառու-

ցողական ժողովուրդին հրաշագանութեան հաւատքը:

Եթէ ազգ մը պարպուի իր հոգեբանութենէն, հեռանայ իր մշակոյթէն և հաւատէն, կանցնի պատմութեան գիրկը: Ներսէն դէպի դուրս աճումն է կեանքը. ու հաւատքը լոյս մըն է հոգիէն ոչ թէ հոգիին վրայ ճարագայթած: Հաւատին ամենէն փրկարար արդիւնքներէն մին, կեանքը հասկնալի ընել է մարդուն:

Հրեաները Աստուծոյ պահանջները ծիսականացուցած, քարացուցած, մակերեսեցուցած և ձեւականացուցած էին՝ հաւատքը: Իրա՛ւ հաւատքը կեանք է, հոգեկան մղում և ապրում: «Ճշմարիտ հաւատքը այն է որ կոյր չէ բնաւ և հերու է կուրացուցիչ ըլլալէ: Ան կը ծնի Հոգեկան լոյսէ մը, չպատճառաբանուող բայց անառարարկելի ներքին ապացուցութենէն՝ որ գիտակցութիւնն է ինքինին: Ա՛յս է իր ճշմարիտ նկարագիրը»--**Թորգոմ Արք. Գուշակեան:**

Պահէ հաւատքը--բայց ոչ միայն ինքզին:

Հաւատքը, սկսեալ Թէոտոսիոս Ա. կայսրէն յետոյ, պետական կրօնի նկարագիր ստացած էր՝ *անհանդուրժող և մոլեռանդ:* Արեւմտեան եկեղեցականութիւնը մխրճած էր ինքզինք բազմաթիւ գործունէութիւններու մէջ, այնպէս որ ժամանակ չուներ սերտելու ու խորացնելու իր հաւատացածը: Հաւատքը, մարդու հինգ զգայարաններէն և տրամախոհական կարողութիւններէն վեր, տեսակ մը վեցերորդ զգայարանք մըն է: Հաւատքը բարդ երեւոյթ մըն է, որուն մէջ իմացականը, կամայինը և զգացմունքայինը գոյութիւն ունին իւրայատուկ ներդաշնակութեամբ մը:

Դառն հիասթափութեամբ կ'ապրի հաւատացեալը, բայց չսասանիր անոր հաւատքը, չկորսնցնէր լաւատեսութիւնը ու չմարիր յոյսը:

Քրիստոնէութիւնը պատկերաւոր յայտնութիւն է:

Իսկ

Դիցաբանութիւնը պատկերաւոր մտածում:

Անառակ Արդին, իր հօր ներողութեան վրայ ունեցած հաւատքը զինքը կը տանէր քայլ առ քայլ դէպի տուն: Հաւատքը պէտք է վերածնի մարդուն մէջ որ դառնայ իրականին ու ճշմարիտին հասկացողութիւնը: Այս ալլաւերած աշխարհին մէջ երբեմն կը փորձուինք մեր հաւատքն ու յոյսը կորսնցնել:

Առանց արդարութեան, ոչ մարդկային սէրը կատարեալ է, ոչ հաւատքը անեղծ, ոչ գութը անկեղծ, ոչ բարեկամութիւնը վստահելի, ու ոչ ալ խօսքն ու խոստումը հաւատալի: Թարգմանիչներու գծած ճամբան՝ «Տեսնել՝ էր տեսանելիէն անդին Անտեսը, ժամանակաւորէն անդին՝ Յաւիտենականը, "գնացք"էն անդին "հաւատք"ը, այսինքն դէպքերէն և իրողութիւններէն անդին

"գնացք"էն անդին "հաւատք"ը, աշխինքն դէպքերէն և իրողութիւններէն անդին գանոնք յառաջ բերող **Զօրութիւնը**»:

Ֆրանց Վերֆել ծնունդով հրեայ, բայց ուղղամիտ, ճշմարտութեան հետամուտ, իր բոլոր գրութիւնները կը հետապնդեն *հաւատք*: իբր կեանքի իմաստ: Քրիստոսի միանալու հիմնաքարը հաւատքն է: Առանց հաւատքի, կեանքը դատարկութիւն է, յուսահատութիւն և անձնասպանութիւն: "Ինչո՞ւ կ'ապրիմ"ը մի միայն հաւատքի լեզուով կարելի է պատասխանել: Ուստի Բալեւնք դէպի եկեղեցին Հայկական, դէպի խորա՛ն հաւատքի, եկեղեցիի խորհուրդէն բխած բարոյական ուժով և հաւատքի ներգօրութեամբ:

«Ես»ի և փառամոլութեան հակադրութիւնը՝ հաւատքի՝ աշխարհն է, գաղափարականի և բարոյական գեղեցկութեան աշխարհը: Կոչումը արտայայտիչն է հոգեւոր պաշտօնեայի հաւատքին, համոզումներուն, նուիրումին և ծառայութեան: Մարդկային բոլոր զարգացումը, Բաղաճալքութիւնը, դաստիարակութիւնը և յառաջդիմական մղումները հաւատքի թելադրութիւններ են միայն:

Առանց հաւատքի և հոգիի լոյսին, միտքի լոյսը սէզ ու հպարտ, ամբարտաւան, պատուհաս ու անէծք է աշխարհի: Գաղափարի և հաւատքի մջակները, որոնք թափառելով դպրոցներ հիմնեցին: Աւելի քան մէկ ու կէս միլիոն Հայեր, որոնք վասն հաւատքի և վասն հայրենեաց ողջակիզուեցան ու նահատակուեցան թուրքին կողմէ 1915 Մեծ Եղեռնին:

Յիսուս Քրիստոսի կեանքն ու գործունէութիւնը *ակայծեմական* հարց մը ըլլալու չէ՛, այլ հաւատքի, հաւանելու և յօժարելու խնդիր մը: Արդի կեանքի ամենակարեւոր և ազդեցիկ ամենօրեայ մարդու կեանքը իթանող հարցն է Յիսուս Քրիստոսի կենցաղավարութիւնը:

«Հաւատքի ճշմարտութիւնը լոյս է մտքի աչքերուն համար»

--Ս. Գրիգոր Լուսաւորիչ:

Հակակրօն յեղափոխականներ, քրիստոնէական կրօնին դէմ մղուած պայքարին մէջ, առժամեայ յաջողութիւններ ունեցան, բայց երբեք չկարողացան ժողովուրդներու մէջէն արմատախիլ ընել կրօնի զգացումը և հաւատքի մարմաջը... : Ճանչցուած գիտութիւնը կամ հմտութիւնը՝ միայն *երեւցած* իրականութիւնն է: Ի՞նչու չհաւատալ իրականութիւններու, որոնք մեր հասողութենէն դուրս, և ըմբռնելու կարողութենէն անդին են:

Չորրորդ դարէն ի վեր, Հայ մարդու գիտակցական և ենթագիտակցական վիճակը կազմող մեծագոյն ազդակը կազմած է իր հաւատքը՝ Քրիստոնէութիւնը: Խաչքարերը դարձան հոգեխօս կոչնակ սիրոյ և հաւատքի, զոհողութեան և անամհութեան: Կը հիանանք, կը սփանջանանք մեր նախնեաց հաւատքի ուժին և հզօր կամքին, որուն առջեւ ժայռերն անգամ կը բացուին, կը վերածուին աղօթավայրերու և ուխտատեղիներու:

Հաւատքի գործիչներ տեսիլքէ տեսիլք խոյացող՝ հոգւոյ տէր անձինք, ինքզինքնին կը համարէին միջոցներն ու գործիքները լոկ գերագոյն Իմաստութեան, որ հաճած էր այցելել արկածեալ ազգի մը ճակատագրին և ուղղել զայն դէպի փրկութիւն: Քրիստոսանման ապրումը հաւատքին խտացեալ լեզուն է:

***Վախը՝ մերժումն իսկ է հաւատքին:
Տարակոյսը հաւատքին մէկ մասն է:***

Լուսինէն Չափարեան, շնորհիւ իր ջերմեռանդ հաւատքին և սիրոյն, եկեղեցական երածջտութիւնը բեմ փոխադրեց: Ձուիկ կը ֆաշալերէր, որ իր զաւակները ըլլան պատուաւոր, ֆաշասիրտ, վեհանձն և հաւատարիմ իրենց քրիստոնէական հաւատքին:

Մի՞եղ Անճէլո իր վերջին տարիներուն սկսաւ հաւատալ թէ հաւատքն է որ պիտի արդարացնէ մարդը--Քրիստոսի Խաչելութիւնն է գերագոյն փրկութեան միջոցը (շնորհը):

***«Ո՛վ կը յաղթէ աշխարհին, եթէ ոչ ան՝ որ կը
հաւատայ, թէ Յիսուսն է Աստուծոյ Որդին»:***

--Ա. Յով. Ե.5:

Յախտենականութեան ներկայութիւնը սկիզբ կ'առնէ անձի մը մէջ հաւատքով, մեր շնչաւոր կեանքին մէջ: Հաւատքով՝ Աստուած և մարդ կը միանան և կը հոգեխառնուին իրարու հետ. ինչպէս ֆիզիզական կազմին մէջ, կերակուրը և զայն ընդունող մարմինը: Աբ. կոյս Մարիամի «այո»ն, հաւանութիւն մըն էր, որ սրուեցաւ կատարեալ հաւատքով առ Աստուած: Մարդկային էակ մը (Մարիամ) համագործակցելով Աստուծոյ հետ, յախտենական փրկութեան ճամբան բացաւ: Վերանորոգենք մենք ալ մեր ուխտը երկնքի հետ պայծառ հաւատքով ու ճշմարիտ սիրով:

«Մեսրոպ Մաշտոց հրեջտակի տեսք ունէր, բեղմնաւոր միտք, պայծառ էր իսուֆով, գործերով ժուժկալ մարմնով փառահեղ, սովորութիւններով աննման, խորհրդակցութեամբ մեծ, հաւատքով ուղիղ, յոյսով համբերող, սիրով անկեղծ, ուսուցանելիս անձանձրոյթ»--**Մովէս Խորենացի:**

Հաւատքով իրականացած կը տեսնեմ իմ չ'իրականացած իղձերս: Հաւատալով կասկածի ստուերները կը փարատին, անորոշութեան ջուրերը կը նահանջեն: C. S. Lewis-ի կասկածներն էին, որ Չորդ Դարու հաւատքի մեծագոյն ջատագովը դարձուցին զայն: Թովմաս առաքեալի կասկածներն էին, որ զինք վերադարձուցին սուրբ առաքելութեան:

Անչափահասութեան իսուֆեր. «Մինչեւ որ գամերուն հետքերը չտեսնեմ Անոր Ձեռքերուն մէջ ու մատներս չդնեմ գամերուն տեղերը և ձեռքս չդպցնեմ Անոր Կողին՝ չեմ հաւատար»։ Յիսուսի մելանոյշ հրաւերը

Թովմասին. *«Մտադ բեր՝ հո՛ս դիր և տե՛ս Ձեռքներս, բե՛ր ձեռքդ և դպցուք կողիս և անհաւատ մի՛ ըլլար, այլ՝ հաւատացեալ»:* Յիսուս դառնալով Բեզի և ինծի կ'ըսէ այսօր.

***«Երանի՛ անոնց՝ որոնք առանց
Ձիս տեսնելու կը հաւատան»***

Տարակոյսը հաւատքին մէկ մասն է: Աղօթքը տրամութեան տարակուսանքներու և վիշտերու հրաժարադեղ սփոփանքն է: Հաւատով յուսաբեկ սրտեր պիտի գօրանան, տարակուսեալ սրտեր պիտի վերաջինուին, մեղաւոր հոգիներ պիտի սրբանան ապաշխարանքի արցունքներով, սգաւորներ պիտի սփոփուին, տգէտներ պիտի լուսաւորուին Աւետարանի ճրագով, անհաւատներ և իմաստակներ դարձի պիտի գան:

Տարակուսող մը կ'ըսէ. «Եթէ միայն մաթեմաթիկական ստուգութեամբ համոզուիմ հոգւոյ անմահութեան...: Մաթեմաթիկական փաստերու գօրութիւնը *տարադա՛ն* է բարոյական փաստէն: Փառասիրութեան և ամբարտաւանութեան պատճառներով անստուգութիւնն ու սկեպտիկութիւնը տեղ գտաւ տարակուսող մտքերու մէջ, և յառաջ եկաւ 20րդ Դարու ոչնչապաշտութիւնն ու անիշխանութիւնը: Անաստուած, ջուարած և ինքնաստուածութեան ձգտող 19-20րդ Դարու իմաստակներ երգեցին ու տաղեցին, թէ միակ իրականութիւնը այս կեանքին մէջ Բառս ու խառնաշփոթութիւն է, միակ տիրակալողը *անտարբերութիւնն է ...*

Ռիչարտ Ռուպինսթայն եզրակացուց թէ մարդ առանձինն է աշխարհի վրայ, և մի միայն կրնայ վստահիլ իր անձին և կարողութիւններուն վրայ: Այսուհետեւ մարդ *ապրելու է անյուշարէն:* Հակակրօն յեղափոխականներ, Բրիտոննէական կրօնին դէմ մղուած պայքարին մէջ, առժամեայ յաջողութիւններ ունեցան, բայց երբեք չկարողացան ժողովուրդներու մէջէն արմատախիլ ընել կրօնի գգացումը և հաւատքի մարմաջը...: Աստուծոյ բացակայութիւնը անհաւատներու խաւարած ներաշխարհին մէջ ստեղծած է դատարկութիւն, անոնք չեն գիտեր, թէ Աստուած մը կա՞յ, թէ չկայ:

Ժան Փօլ Սարթր ընդհանրացուց կեանքի դատարկութեան տեսութիւնը: Ան տեսաբանեց ու Բարոզեց վերջնական ոչնչութիւնը կեանքին, ցոյց տալով կեանքի անիմաստ պատճառը: Անաստուած, ջուարած և *ինքնաստուածութեան* ձգտող 19-20րդ Դարու իմաստակներ երգեցին ու տաղեցին, թէ միակ իրականութիւնը այս կեանքին մէջ *Բառս ու խառնաշփոթութիւնն է...* միակ տիրակալողը *անտարբերութիւնն է...*: Նորամուլութեան Բայքայող հոսանք մը կայ որ մոլեգնաբար կ'ուզէ ջնջել և փճացնել ամէն գեղեցկութիւն և սրբութիւն: Կրօնքի փոխարեն կ'ուզեն հիմնել հասարականութիւն մը առանց եկեղեցիի, բարոյականութիւն առանց կրօնքի և մարդ՝ առանց Աստուծոյ:

Կրօնի քննադատութիւնը «*Արքեպիսկոպոստ*»-տեղի ունեցաւ ժԹ Դարուն: Ըստ A. Comte-ի 1857 թ., կրօնքը հակամարդկային է, որովհետեւ հակա-գիտական է: Ըստ Քառյ Մարքսի 1883, "Կրօնքը թուլացնող մի թմրադեղ է":

Դժբախտաբար հայերուս մէջ ալ գտնուեցան անասուած բանաստեղծներ: Զարեհ Մելիքնեանին անասուած բանաստեղծութիւնը՝ Տ Դեկտեմբերին 1996, նիւ ճրրգիի մէջ ներկայացուած:

«Դո՞ւն, պա՞կը արարչագործութեան... :
Օ՛ր, թո՞յլ տուէ՛ որ լիահագագ ինդամ...
Ո՞ր Աստուածն է այնքան ապուշ՝
Որ բեզի պէս պաա՛կ մը գետեղէ ինք-իր գլուխին շուրջ...:
Մա՛րդ,
Ես
Քեզ
Ստեղծող Աստուածն անգամ
Պիտի չուզէի՛ ըլլալ...
Քեզ ստեղծելո՞ւ աստիճան
Պիտի չուզէի՛ նուաստանալ... :

"Անասուած"ի դերը խաղացողներ կան ու պիտի շարունակեն ըլլալ առանց համոզումի, առանց հիմի, անգէտ ու անպատճառաբանեալ: Անասուածները աւելի *փաստ և բացատրութիւն* կը փնտռեն կամ կը հետապնդեն, քան թէ *յայտնութիւն, ապացոյց և վկայութիւն*: Ես գոհացուցիչ կերպով համոզուած եմ թէ կա՛յ ապացոյց և վկայութիւն Աստուծոյ գոյութեան, սակայն սոյն հարցումին էութեան ու գոյացութեան համար *գիտակա՛ն* փաստ մը չունիմ:

***Որովհետեւ Աստուած գիտական
փաստարկութենէ գերազանց է:***

Գիտնականներ իբր թէ ձեռք ձգած են 13 հազար տարի առաջ չքատէն գատուած և չորսուկէս միլիարտ տարի հնութիւն ունեցող երկնաբար մը, գետնախնձորի... մեծութեամբ, որ կը պարունակէ *քրաժոյ*, մանրածճիներ... : Այս մշուշապատ, անստուգելի, ենթադրութիւններու վրայ հիմնուած տեղեկութիւնն է որ աշխարհի գիտունները իրար անցուցած է:

Ի՞նչ շահ կայ չքատի վրայ կեանք գտնելու մէջ: Ըստ "գիւտարար"ներուն, ասիկա պիտի փաստէ, թէ ան "կեանք"ը (ֆարի մը կտորը) կրնայ որեւէ տեղ *հե՛նցիոնն* ծագում առնել: Ուրեմն Աստուծոյ միջամտութիւնը աւելորդ է, և Աստուած գոյութիւն չունի...:

***Անաստուածութիւն կոչուածը ֆողարկուած
իւն՝ անաստուածացում է:***

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս՝ Իր մելանոյշ ձայնով կը կանչէ բոլոր ջուարած անհաւատները, հպարտ փառասէրները ու մոլորած գիտնականները ըսելով.

***“Այլ բոլոր ջփռթածներ հպարտ նրազողներ
«Ինձի՛» եկէ՛ք դուք բոլորդ, յոգնածներ և
բեռնաւորուածներ, և ես հանգսիտ պիտի տամ
ձեզի», ձեր մտներուն ու հոգիներուն.***

**Յունվար 1, 1992
Թորոնթօ**

ՀԱՒԱՏԱԼ ԵՒ ՏԱՌԱՊԻԼ

Ստեղծագործ և կենսատու երկու բեւեռներ կան, որոնք կը բխին նուիրումի, զոհողութեան ու տառապանքի հոգեկան ապրումէ: Այս կենդանարար ապրումի առանձնաշնորհը կու գայ երկնառաք կոչումէ, որ կարելիութիւնը կ'ընծայէ ենթակային դառնալ աստուածանման:

Հարեւանցի ակնարկով ու անձնասիրական տրամադրութեամբ որքա՞ն անիմաստ և խորթ կը թուի "տառապանք"ը *զօղել* "հաւատք"ի հետ: Բնական մարդը (անձնակերպուն ու անկարեկիր) հողաշէն ու նիւթեղէն յօրինուած էակը, նախ քան ստանալը աստուածային շունչ, ներգորութիւն, լուսաւորութիւն ու քանականութիւն, անկարելի էր որ կարենար տեսնել տառապանքին ու ցաւին ստեղծագործ գերգորութիւնը: Անհատներու և ազգերու, Աստուծոյ դէմ կասկածի և ըմբոստացումի գլխաւոր պատճառներէն մին, եղած է մարդկային ցաւն ու տառապանքը: Նոյնիսկ մեր ազգային հարազատ քանաստեղծներն իսկ, յաճախ հարց տուած են ըսելով.

«Ո՛ւր էր Աստուած մեծ եղեռնի պահուն:

Հարցումը տեղին է և արդար: Որովհետեւ *մարդկայի՛ն* մտածումն ու խորհրդածութիւնը կարելի չէ զսպել կամ սանձահարել: Լեզուն կարելի է հնազանդեցնել սակայն *միտք* ո՛չ: Ինչո՞ւ, որովհետեւ մարդկային միտքը՝ աստուածային այն կայծն է, որ մարդ էակը կը գատորոշէ ուրիշ արարածներէն: Միտքն ու մտածումը, մարդու շնորհուած գրաւականն է, որ ինք կը պատկանի Արարիչ Աստուծոյ: Մարդկային միտքը անկապտելի է: Աստուած մեր միտքը չի սանձահարեր, այլ կը լուսաւորէ՛: Մեզի դողած է բնորոշելը ու կշռա-դատելը:

Յիսուս Զրիստոսի բացայայտած հաւատքի ու տառապանքի նորայայտ իրադարձութիւնը, Բրիստոնէական հարուստ իմաստին մէջ, ըմբռնելու համար, մարդ կարիքը ունի հոգեկան յափշտակութեան: Ինչո՞ւ, որովհետեւ հեթանոսական դարերու անիմանալին և անըմբռնելին՝ Զրիստոսի սրբարա՛ր ***Խաչելութեա՛ն*** լոյսին տակ ըմբռնելի կը դառնայ:

Մարդկային հոգին այնքա՞ն քարդ է ու բազմակողմանի անոր ըմբռնումներու, ապրումներու ձեւերն ու կերպերը, որ անոնց իւրաքանչիւրը իր արտայայտութեան լեզուն և առանձնայատկութիւնները ունի: Հետեւաբար արդի դարու հաւատացեալ մը Զրիստոսի՛ ճշմարտութեան լուսամուտէ՛ն դիտելու է ըմբռնելու համար աստուածային շնորհը և Յիսուս Զրիստոսի յաւերժաբոյր խօսքերը, երբ Ան խօսեցաւ տառապանքի մաքրագոյնիչ ու բիւրեղացուցիչ հաւատքի մասին.

**«Յիսուս սկսաւ յստակօրէն յայտնել աշակերտներուն թէ
պէտք է որ Ինք երուսաղէմ երթայ, ջրա չարչարաններ
կրէ Բահանայապետներէն, դպիրներէն, ժողովուրդի
ծերերէն. և սպաննուի»:**

Հաւատքի ժայռահիմն Յիսուս Բրիստոսի խօսքերուն մէջ հերոսանալու, հեթանոս պայքարամարտի գաղափարը չկայ, այլ կա՛յ Իր առաքելութեան *նուիրումն* ու հաւատարմութիւնը, որոնք ո՛չ պարագայական են ու ո՛չ ալ շահադիտական: Երկնային Պատգամաբեր Մեսիան կը զոհաբերէ Իր Անձը մարդկութեան համար ու Իր Կամօք կը նուիրէ Հօր Աստուծոյ հանձարեղ Կամեցողութեան: Երկնաբաշխ Սիրոյ արիութիւնը իր լրումին հասցնելու համար անհուն Զգաստութիւն՝ Յիսուս կ'ընդառաջէ և կը յօժարի տառապիլ, անարգուիլ ու անարդարօրէն մահուան դատապարտուիլ:

Անձնամատոյց Յիսուս երբ կ'ըսէ. **«Ես եմ Ճամբան»:** Ան ըսել չուզեր թէ Իր ճամբան սաղայատակուած է ոսկիով ու լուսազարդուած արդի ելեկտրական լոյսերով, այլ Իրեն հաւատա՛լ ու Իրեն հետեւիլ իր մէջ կը պարփակէ տառապանք, ցաւ ու զոհողութիւն: Ոչ թէ սուբով ու *զէնֆուլ* եղած հերոսութիւնը, այլ **անձնա՛զոհութեամբ** ու անձնուրացութեամբ կատարուած հերոսութիւն: Բրիստոսի ճամբան այն վերելքն է, որ մարդ էակը կը բարձրացնէ անասնութենէ դէպի աստուածանամանութիւն, նիւթեղէնէ դէպի հոգեղէն և ժամանակաւորէն դէպի յաւերժութիւն:

Աստուած անհննելի իսկութիւն է, անհասանելի մարդկային պարզ հետաքրքրութեամբ, որովհետեւ Ան սուրբ է ու երկնային անդիմադրելի Զօրութիւն: Ան մարդկայինը՝ գերմարդկայինի կը վերածէ, կաւը՝ լոյսի, սկարութիւնը՝ զօրութեան: Աւելի խորապէս կարելի է երեւակայել զԱստուած, Բան թէ բացատրել, և ալ աւելի իրապէս գոյ է Ան, Բան թէ կրնանք երեւակայել զԻնք: Մարդ՝ Աստուծոյ լծակցութեամբ միայն կրնայ իր կոչումը իրագործել այս աշխարհի վրայ:

Վերոյիջեալ անըմբռնելի ճամբան հասկնալն ու գիտնալը հոգեկան և փորձառական վարժութիւն կը պահանջէ: Ողիմպիականի մրցորդ մարզիկներ հանգստաւէտ ու դիւրակեաց ճամբով չէ՛ որ կը հերոսանան և կը իլեն դափնեպսակները, այլ անդու և յարատեւ աշխատանքով, երբեմն վիրաւորուելով իսկ և ֆիզիքական ցաւեր Բաշելով աննահանջօրէն կ'արշաւեն դէպի իրենց նպատակակէտը:

Դիտենք բնական մարդը, աշակերտող հաւատացեալ մը, սակայն *յաւակնուս* հաւատացեալ մը, որ չէ մերկացած իր հին նախապաշարումներէն: Այս աշակերտը կը ներկայանայ մեզ Աւետարաններուն մէջ որպէս Պետրոս, մէկը տասներկու ընտրեալներէն: Յիշողութեան արժանի դրուագը, Պետրոս առաքեալի մէկ տխուր և սակայն փոքր երեսակներէն մին է: Պետրոս

աշակերտի հատուածական այս միջադէպը հետեւեալն է: Ան կը ներկայացնէ ընդհանուր հաւատացեալները: Ան կ'աճապարէ իր խօսակցութեան մէջ, և իբր թէ կ'ուզէ խրատել իր Յիսուս Վարդապետը ու կը սկսի վիճիլ ըսելով.

«Բաւ լիցի բեզ, Տէ՛ր, այդ բանը բեզի չի պատահիր»:

Յիսուս նախապէս սկսած էր յստակօրէն յայտնել աշակերտներուն, թէ պէ՛տք է որ Ինք Երուսաղէմ երթայ, ջատ չարչարանքներ կրէ Բահանայապետներէն, դպիրներէն, ժողովուրդի ծերերէն և սպաննուի ու երրորդ օրը յարութիւն առնէ: Երբ Պետրոս կ'ընդլիմանայ Յիսուսի, մեր Տէրը դառնալով Պետրոսին կ'ըսէ.

«Ետի՛ս գնա, Մատանա՛, դուն գայթակղութիւն ես ինձի համար, որովհետեւ Բու մտածումներդ Աստուծոյ մտածումները չեն, այլ՝ Մարդոց»--Մատթ.ԺԶ.22:

Յիսուս Բրիստոսի ամենասքանչելի խօսքերէն մին հետեւեալն է.

«Ընու մտածումներդ Աստուծոյ մտածումները չեն»:

Ի՞նչ խորհրդապաշտական (միստիկ) արտայայտութիւն: Ի՞նչ հսկայ տարբերութիւն կայ *բնական* մարդու և Մարդեղեալ Յիսուսի մտածումներուն միջեւ: Ահաւասիկ ջողջողուն տեսական մը, գեղազմայլ մտաստիպար մը և հմայագեղ ճանապարհ մը, որ ուղղութիւն կու տայ *բնական* մարդուն ստանալու տեսիլք, որ թէ՛ աստուածային է և թէ՛ ստեղծագործ:

Այսպիսի ելարան մըն էր, ուր մագլցեցան այն սուրբերը, որ Հայ մատենագրութեան մէջ կը կոչուին Նարեկացիներ, Ծնորհալիներ, Մեսրոպներ, Լուսաւորիչներ, Սանդուխտներ և Ծուշան Վարդենիներ:

Վերոյիջեալ սուրբերուն նախա-աշակերտը եղած էր Պօղոս առաքեալ, որ նախ քան իր հրաշունչ Բարոզութիւնները ու վարակիչ սիրոյ շատրուան նամակագրութիւնը, ինքզինք մեկուսացուցած էր աշխարհէ ու իր բարեկամներէն: Ան դարձած էր անապատականը Արաբիոյ կիզիչ անապատներուն մէջ ու քանի մը տարիներ հսկումով ու աղօթելով ստացաւ Բրիստոնէական վերածնունդ, ո՛չ թէ *բերանացի*, այլ *կենցաղավարական*: Ահա թէ ի՛նչ կը մտածէ Պօղոս առաքեալ երկու տարի Արաբիոյ Բարանձաւներուն մէջ խոկալէ և Յիսուսի հետ դէմ յանդիման գրոյցներ ունենալէ յետոյ.

«Վասնզի ձեզի տրուեցաւ (ընտրուեցաւ) Բրիստոսի համար՝ ոչ թէ միայն անոր հաւատալ, հապա Անոր համար չարչարուիլ ալ»--Փիլ. Ա.29:

Առաքելական աստուածաշնչեալ բառերը նորանշան լուսամուտ մը, երկնագեղ հայեացք մը և Յիսուսահմայ մտածում մըն է, որ կը գերադասէ մարդկային, եսասիրութիւնը և անձնապաշտութիւնը: Սուրբ նպատակի և սիրոյ համար եղած ցաւն ու տառապանքը *աստղածագործութիւն է և արարչագործութիւն մը անհատի հոգիէն ներս:*

Ս. Գրիգոր Պահլաւունիի 13 տարիներու տառապանքն էր Խոր Վիրապին մէջ, որ դարձի բերաւ Տրդատ Թագաւորը, Հայ պալատականները և Արարատեան ժողովուրդը կանգնեցուց լուսաւորութեան ճանապարհին վրայ: Սուրբ կոյսերու և վանականներու աննահանջ մարտիրոսութիւնն էր, որ մարդկային *քնակաւ* մտածումի դրները խորտակեց ու ցոյց տուաւ լուսապայծառ մտածումը Յիսուս Զրիստոսի:

Գողգոթայի անարկու որոտումներու և կայծակնաբոց փայլատակումներու լոյսին ու փոթորիկներուն տակ լսուեցաւ Հօր Աստուծոյ սիրոյ կանչը Իր Միածնի տառապակոց ջրթներէն ու խաչին նախատինքն ու անէծքը փոխակերպեց յաւերժաբոյր փրկութեան, երբ Յոյնն ու Հրեան, հեթանոսն ու Հռոմայեցին լսեցին.

«Հա՛յր, ներէ՛ առոնց որովհե՞տեւ չէն գիտեր թէ ինչ կ'ընեն».--Ղուկ. ԻԳ.34:

Ահաւասիկ հաւատքի ճանապարհը որ գուգորդուած է տառապանքի, ցաւի և նուիրումի, որ կը տանի հաշտութեան, փրկութեան և յաւիտենական կեանքի:

Մարդկութեան ներկայ գոյութիւնը արգասիքն է *աստուածայի՛ն* տառապանքին ու ցաւին: Հետեւաբար մարդկային անհատական և համազգային տառապանքն ու ցաւը արժանիք մը պիտի դառնայ անհատին, ընտանիքին և ազգային յաւերժութեան,

երբ այդ տառապանքը ըծակցութիւն մը մասնակցութիւն մը դառնայ Արարիչ Աստուծոյ սուրբ և ծննդագործող տառապանքին:

**Սեպտեմբեր 21, 1987
Թորոնթօ**

ՍԷՐ ԵՒ ՎԻՃԵՑ ՀԱՒԱՏՔ ԵՒ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

Ճարտարապետական հոյակապ շինութիւններու նախանիւթը կաւն ու հողն է և ինչ որ ան կը պարունակէ իր մէջ:

Աստուած որպէս գերագոյն ճարտարապետ տիեզերքի և մարդկութեան՝ Ա՛ն կը գործածէ կաւն ու հողը որպէս նախակազմիչ մասնիկ: Կաւակերտ բոլոր շինութիւնները անջարժ են, անհոգի և անզգայ ինչպէս կամուրջներ, երկնաբարձ ջէնքեր և ջրամբարներ: Արուեստի լաւագոյն ֆանդակներն ու գիտարուեստի առաջնակարգ համակարգիչներ՝ անխօս են ու ցուրտ և զուրկ որեւէ զգացումէ և շարժումէ:

Բազմաթիւ գոռոզ բանգէտներ և դժբախտաբար կարգ մը Հայ բանաստեղծներ, մոռնալով իրենց փոքրութիւնն ու անբաւարարութիւնը, կ'ըմբոստանան Աստուծոյ դէմ ու կը պոթկան աշխարհի տառապանքին և ցաւին համար:

Կաւաջէն ու մոխրադարձ նախամարդը աստուածակերպար դարձնելու միակ ճամբան, աննիւթական ու ոգեկան եութեամբ ջաղախել էր մարդակալ ցեխը: Աստուածակերպար ստեղծագործ բաղադրիչ էատարրը՝ *սէր և վիշտ, հաւատ և փորձութիւն են:*

Հպանցիկ ակնարկով՝ գայթակղեցուցիչ թուի ոմանց վերելի տիրական խօսքերը: Մակայն անոնք իրենց մէջ կը պարունակեն ճշմարտահաղորդ սերմանման խօսքեր: Շատ քիչ բացառութեամբ, բոլոր այն զաւակները որոնք հարստութեան մէջ ապրած ու քմահաճօրէն ստացած են իրենց բոլոր պահանջները, և կեանքի բովէն չեն անցած, դարձած են իմացական երախաներ և հոգեպէս անկարեկիր ազգայիններ: Ձի մոռնանք Ֆրանսայի թագուհիին պատասխանը անօթիներու աղաղակին որ ըսած ըլլայ. *«Եթէ հաց չ'ու նիւն, թող կարկանդակ ու տեն».*

Սէր և վիշտ, հաւատ և փորձութիւն ոչ թէ իրար կը հակասեն, այլ՝ նո՛յն հոգեկան վիճակին ժխտական կամ լրացուցիչ երեսակներն են: «Սէր» չի կրնար գոյութիւն ունենալ առանց վիշտի, այնպէս ինչպէս մէկը չի կրնար պարծենալ ըսելով որ ինք յաջողած է. **Եթէ ձախողութիւն գոյութիւն չունենար:** Միթէ ձախողութեան պատճառաւ չէ՞ որ մարդիկ յաջողելու փորձեր կ'ընեն:

Ի՞նչպէս կարելի է հաւատալ եթէ անձ մը չփորձուիր: Հաւատքը շօշափելի տոմս մը չէ ճամբորդութեան համար: Հաւատքը առանց շօշափելի նիւթականի, *հոգեկա՛ն* աչքով վստահիլ է, ոստում մըն է դէպի անծանօթը

որու ընթացքին խաւարակուլ փորձութիւններ կը ջանան ծածկել հաւատացեալի հոգեկան աչքը Լոյս Աստուծմէ: Հաւատալը՝ ներիմացական և ոգեկան հիմունքով իբրեւ ճշմարտութիւն ընդունիլ է իրողութիւն մը, որ շօշափելիօրէն անապացուցանելի է ներկային:

Ներմարմնային իրականութիւններու զգացողութեան յաղթանակով, բնան դարեր ջարունակ մեր հաւատաւոր ծնողները դարձան դիւցազունները Հայ հաւատքին երբ Հայ ազգը ողջունեց Յիսուսի հաւատքը 301 թուականին:

Քանդակներ ձեւակերպող արուեստագետներ՝ իրենց ստեղծագործութեան վրայ կ'աջխատին դուրով, գէլիով և մուրճով: Տաշելով և յղկելով մարմարը, քանդակագործը կը յայտնաբերէ իր մտայղացումն ու ճաշակը սոյն մարմարին մէջէն: Փառապանծ Արարիչ Աստուած, դուրով և մուրճով մեզ չի հարուածէր որովհետեւ մարդ-արարածին մարմնակերտութիւնը անսման գեղեցկութեամբ օժտուած է և իր հուլանի մարմինը նախանձը կը բրբրէ նոյնիսկ երկնային հրեշտակաց: Մարդ արարածին թերութիւնը և պակասաւոր կողմը, իր խորհրդագեղ և մանուածապատ զգայութեան *հաղորդութիւնն* է (աղօթք) իր Արարիչին հետ: Սոյն անկատարութիւնը՝ ստեղծագործ և հանճարեղ Արարիչին պարտազանցութեան մէջ փնտռելու չէ, որովհետեւ Աստուած մարդուն անկատարութիւնը եթէ Ի՛նք լրումին հասցներ, մարդ ոչ թէ պիտի դառնար աստուածանման, այլ *անասնան/ան*, կորսնցնելով իր անձնաւորութիւնը, *ազատ կախ/ք* և բուէարկելու իրաւունքը: Մարդ-արարածին կատարելութեան հասնելու միակ կերպը և բանալին (լրծումը), մարդը ի՛նքն է: Այս պատճառաւ Յիսուս ըսաւ նախօրօք աստուածակերպար մարդուն.

«Արդ, կատարեա՛լ եղէ՛ք դուք, ինչպէս որ կատարեալ է ձեր երկնաւոր Հայրը»--Մատթ. Ե.48:

Սոյն խօսքերը պատուէր և հրահանգ են: Յիսուս չ'ըսէր մարդուն «Աստուած թող ձեզ կատարեալ ընէ», այլ՝ *դու՛ ք* (մարդիկ) պարտաւոր էք այդ *անկատարութիւնը* լրումի հասցնել:

Ինչո՞ւ:

Միթէ կարելի՞ է որ հիւանդին *բարեկախ/ը* դեղահատիկները ինք առնէ և *հիւանդը* առողջացնէ: Կարելի՞ է որ ծնողք մը իր մարմինը մարգելով իր զակին ողիմպիական մրցումի պատրաստէ: Մարդկային կեանքի ընթացքին պարագաներ և յարակից դէպքեր և հանգամանքներ կան, ուր ենթական ի՛նք միայն կրնայ օգնել և օժանդակել իր վերելքի աջխատութեան և ստուգութեան:

Հոգեմտաւոր վերելքի աջխատանքն ու ջանքը կ'իրագործուին ոչ թէ *ծրկոտոյ աւելի* մը դուրի և մուրճի միջամտութեամբ, ինչպէս վերեւ յիշեցինք, այլ ենթակային սիրոյ և վշտի, հաւատքի և փորձութեան խարքալումովը: Ստեղծագործութեան կատարը, որ մարդ-արարած ինքն է, պարտաւոր է բաշել

սիրոյ և վշտի, հաւատքի և փորձութեան Գողգոթան, որովհետեւ մարդուն *ազատ կամփի* զսպանակը ի՛ր ձեռքն է ու ո՛չ Աստուծոյ: Որովհետեւ Աստուծմէ զատ, համայն տիեզերքի մէջ, միայն մարդն է ջինարար ճարտարապետը Բաղաբակրթութեան և հեղինակը իմաստասիրութեան և ներշնչական Բերթողականութեան: Մարդ-արարածին բոլոր ստեղծագործ գերբնական արդիւնաբերութիւնը արժանի վարձատրութիւնն է ոչ թէ իր շօշափելի և ապացուցանելի փաստարկութիւններուն, այլ՝ իր ոգեկան *ցաւատա՛նչ* երկունքին՝ Ժննդագործութիւններուն:

Հետեւաբար այս աստուածապարգեւ և ջնորհաբաշխ *սիրելի և լա վշտանալը, հաւատա՛լն և փորձուիլը* դիտելու չէ՛ որպէս յառաջդիմութեան խոչընդոտներ, և արգելքներ, այլ՝

կոռուանը վերելքի, սրբութեան և յաւերժութեան:

Մայիս 26, 1990

Թորոնթօ

“ԻՆՉ ՈՐ ԿԸ ԼՍԷՔ ՈՒ ԿԸ ՏԵՍՆԷՔ”

Յիսուս՝ Իրեն ուղղուած վիճելի հարցումներուն, սովորական կերպով չի պատասխաներ:

Ինչո՞ւ:

Որովհետեւ բազմաթիւ հարցումներու, բերանացի կամ գրաւոր, պատասխանները, միայն *հետաճիւղաթիւ* ն գոհացնելու կը ծառայեն: Հարցումի մը ջինիչ պատասխանը պէտք է ըլլայ տարհամոզիչ որպէսզի ծառայէ իր նպատակին:

Յիսուսի ուղղուած, *«Ի՞նչն էս, որ գալու էիր, թէ ուրիշի մը սպասե՞նք»* հարցումը, կու գար այնպիսի անձ է մը, որ Յիսուս բնաւ չէր ակնկալեր: Յովհաննէս Մկրտիչ, Յիսուսէ վեց ամիս կանուխ ծնած էր, ու նաեւ ազգական Ս. Մարիամ Կոյսին՝ Եղիսաբեղի միջոցաւ: Յովհաննէս Մկրտիչ լաւ ճանչցած էր Յիսուսը և իմացած Անոր աստուածածին Մարդեղացումը: Իմացած էր անշուշտ նաեւ մոգերուն այցը և հովիւներուն վկայութիւնները: Ունեցած էր ազգականական յարաբերութիւններ, ու շատ հաւանական է ականատես եղած Յիսուսի կարգ մը գերբնական հրաշագործութիւններուն, նախ քան Անոր պաշտօնական Առաքելութիւնը:

Յիսուս երբ եկաւ Յորդանան գետը, մկրտուելու համար Յովհաննէս Մկրտիչէն, (Որ վաւերացուցիչ դրոջմն էր Հին Կտակարանի աստուածայայտնութեան), Յովհաննէս Մկրտիչ չի համարձակեցաւ նոյնիսկ մկրտել Յիսուսը, այլ՝ առաջարկեց, որ ի՛նք մկրտուի Յիսուսի Ձեռքով:

Յովհաննէս Մկրտիչ խոստովանեցաւ և սապէս ըսաւ Յիսուսի նկատմամբ,

«Յորու ն կօշիկներուն կապերը քակելու արժանի չեմ».

Նաեւ, պատշաճ ու գիտակից կերպով ըսաւ,

«Պէտք է որ ան անի, իսկ ես՝ նուազիմ».

Յովհաննէս Մկրտիչ՝ իր բոլոր համոզիչ փորձառութիւններուն վրայ առաւել, ունեցաւ նաեւ ականջալուր փորձարկութիւնը, երբ Յիսուսի մկրտութենէն անմիջապէս յետոյ, իմացաւ երկինքէն եկած ձայնը որ կ'ըսէր ականարկելով Յիսուսի.

«Ատիկա՛ է իմ սիրելի որդիս, որուն ես հաճեցայ»

--Մատթ. Գ.17:

Ինչպէ՞ս կարելի է որ այսպիսի գիտակից ու քաջ մարգարէ մը, որ անվախ ու անվեհեր ասպարէզ կարդացած էր երկրին բունակալ իշխան

Հերովդէսի, կասկածի՝ Յիսուսի Ինֆուլթեան և իյնայ թերահաւատութեան մէջ:

Թովմաս առաքեալ երեք տարիներ աջակերտեցաւ Յիսուս Վարդապետին, ու մասնակից եղաւ Անոր շնորհած Սուրբ Հաղորդութեան՝ ու նորէ՛ն ինկաւ թերահաւատութեան խորխորատը: Ինչո՞ւ զարմանալ որ Յովհաննէս Ակրտիչ մարգարէն ալ կրնայ իյնալ նոյնանման փորձութեան մէջ: Յովհաննէս Ակրտիչին և Թովմաս աջակերտին պատահած փորձութիւնը, բարոյական խրատ և յորդոր մը դառնալու է իրենց յաջորդող հաւատացեալներուն: Մենք մարդ-արարածներ ենք, հողաշէն ու Ադամածին, ո՛չ աստուածածին:

Զատորոշող այս երկու հայեացքներն են որ կը տարբերեն Յիսուսի և Յովհաննէս Ակրտիչի մօտեցումը առ մարդ արարածին: Յովհաննէս Ակրտիչ կը ներկայացնէ Օրէնքն ու տառը, առանց սիրոյ և շնորհի պատմութեանին: Իսկ Յիսուս՝ Թարգմանն է Իր Երկնաւոր Հօր, որ կեանքի գերագոյն իրականութիւնն է: Որմէ կ'արտացոլայ

սէր, հաշտութիւն, յոյս և թողութիւն մեղաց:

Յովհաննէս Ակրտիչ պահանջատէր դատախազն է Օրէնքին: Իր գլուխը այրած էր անապատի բոցակէզ արեւէն՝ սիրտն ալ խանձած Օրէնքին այրող Մորենիէն՝ և անապատի ֆարանձաւներու մէջ իր հոգին չէր ունեցած ***սիրոյ*** փորձառութիւնը:

Յովհաննէս Ակրտիչին ուղղարկած *աւանդապատ:* պատգամաւորները, որոնք մկրտուած էին միայն Յորդանան գետի *տղմութեամբ* ջուրերով՝ Յիսուս ուզեց մկրտել զանոնք նաեւ Հոգեկա՛ն մկրտութեամբ: Այս պատճառաւ, Յիսուս *խօսեմով* բացատրութիւն չտուաւ Իրեն եղած հարցումներուն և ըսաւ անոնց. ***«Ինչ է տեսէք, դու՛ք լսեցէ՛ք»:*** Մինչեւ որ մարգարէն և առաքեալը, ի՛նք *անձամբ* չ'ունենայ աստուածային առաքելութեան մղումն ու յայտնութիւնը, պիտի չկարենայ տեսնել, ու իր հոգւոյն աչքերը պիտի շարունակեն մնալ գոց: Հաւատացեալ մը, որքան ալ իմանայ աստուածային պատուէրներն ու ականջալուր ըլլայ Աստուծոյ ձայնին, նոյնքան նաեւ լսելու և իմանալու է *թշուառներուն ձայնը*, աղաղակը և հաղորդուելու անոնց տառապանքին, ճանչնալու, գլթալու և ծառայելու համար մարդկութեան:

Յովհաննէս Ակրտիչ *«Ձայն մըն էր անապատին»* մէջ. իսկ Յիսուս եղաւ ***ծառայութիւն և ողորմութիւն*** մարդկային կեանք-ապրումին մէջ: Յիսուս փոխակերպեց պոռնիկը սուրբի, դրամապաշտ Չակֆէոսը բարեգործութեան և ձկնորսները առաքեալներու և աստուածային Միրո՛յ թարգմաննիչներու: Կեանքի այս դիտանկիւնն ու տեսանելիութիւնը ստանալու համար, Իրեն եկող պատգամաւորներուն Յիսուս պատուիրեց, որ ըլլան ***լսողներ, տեսանողներ և ծառայողներ:***

Ահաւասիկ իւրաքանչիւր հաւատացեալին տարրական պարտականութիւնը: Մի՛ խօսիր, մի՛ արտայայտուիր, մի՛ դատեր: Նախ, ***լսէ՛ք տես:*** Նախ տորվէ՛

ոչ միայն կարդալով, այլ՝ **ապրելով** տառապող մարդկութեան հետ: Ոչ թէ միտքով ըմբռնէ անոնց ցաւը, վերացական կերպով, այլ՝ **փորձ առաքար**, բաժնեկցելով անոնց վիշտն ու նեղութիւնը: Թող մարդկային տառապանքը դաչի՝ ձեր մարմինին: Զգա՛յ անօթութիւնն ու ծարաւը մարդկային մարմնին և հոգիին: Որովհետեւ կեանքի ապրումն է միայն որ կը լուսաւորէ: Միայն ա՛յն ժամանակ պիտի դառնաս մարդասէր և ո՛չ մարդադատ: Այ՛ն ժամանակ պիտի տեսնես մարդկութեան որքա՛ն դիւրաբեկ և անզօր ըլլալը ու բու մօտեցումդ պիտի դառնայ որպէս **բժիշկ** և ոչ որպէս **դատաւոր**:

Միայն այնուհետեւ պիտի սկսիս **սիրել** մարդկութիւնը որքան ալ ան ըլլայ մեղաւոր և անառակ: Որովհետեւ տեսա՛ծ պիտի ըլլաս աշխարհը ոչ թէ անապատի մենութեան և խաղաղութեան ընդմէջէն, այլ մարդկային փորձութեա՛ն և ցաւին ընդմէջէն, ծառայելով ու նուիրելով ինքզինքդ անոնց:

Կուզե՛ս վերադառնալ Յովհաննէս Ակրտիչին ու պատասխանել իր հարցումներուն: Նախ տե՛ս Յիսուսը իր նուիրական ծառայութեանը մէջ, լսե՛ ժողովուրդին աղաղակը, նոյնացի՛ր բու ժողովուրդիդ տառապանքին ու կարիքին, զգա՛յ մարմնիդ վրայ բաղքը այն ժողովուրդին որուն կ'ուզես օգնել: Միտե՛ մարդկութիւնը այ՛ն սիրով որ Աստուած սիրած է քեզ:

**Ա՛յնուհետեւ գնայ ըլլալու առաջնալ և
Թարգմանը Աստուծոյ և Յիսուսի.**

**Մարտ 13, 1987,
Թորոնթօ**